ՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՂՄԻՑ ԴՐԱՄԱՇՆՈՐՀԻ ՁԵՎՈՎ ՏՐԱՄԱԴՐՎՈՂ ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ԱՋԱԿՑՈՒԹՅԱՆ ԳՈՒՄԱՐՆԵՐԻ ՕԳՏԱԳՈՐԾՄԱՆ ՄԱՍԻՆ N ՍՊՖԿ 1_ -2021 ՊԱՅՄԱՆԱԳԻՐ

«18» հոկտեմբեր 2021 թ.

ք. Երևան

Հայաստանի Հանրապետության կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարությունը (այսուհետ՝ պետական մարմին), ի դեմս գլխավոր քարտուղարի պարտականությունները կատարող Վահրամ Գասպարյանի , որը գործում է պետական մարմնի կանոնադրության հիման վրա, մի կողմից, և «Հատիս» սպորտային բարեգործական հիմնադրամը (այսուհետ՝ Հիմնադրամ) ի դեմս տնօրեն Սուրեն Պռազյանի, որը գործում է Հիմնադրամի կանոնադրության հիման վրա, մյուս կողմից (այսուհետ՝ միասին՝ կողմեր), հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարի 2021 թվականի հոկտեմբերի 11-ի N 1696-Ա/2 հրամանը (այսուհետ՝ հրաման) և Հայաստանի Հանրապետության կառավարության 2021 թվականի հոկտեմբերի 7-ի N 1659– Ն որոշումը (այսուհետ՝ որոշում) «1163.Մասսայական սպորտ» ծրագրի «11019. Հայաստանի Հանրապետության վարչապետի գավաթ» սիրողական կրոսավազքի մրցաշարի անցկացում միջոցառման (այսուհետ՝ ծրագիր) իրականացման նպատակով կնքեցին սույն պայմանագիրը (այսուհետ՝ պայմանագիր)՝ հետևյալի մասին.

1. Պայմանագրի առարկան

1.1. Սույն պայմանագրով պետական մարմինը պարտավորվում է ծրագրի իրականացման նպատակով Հիմնադրամին հատկացնել որոշմամբ նախատեսված մինչև՝ 35,710.2 (երեսուննհինգ միլիոն յոթ հարյուր տաս հազար երկու հարյուր) ՀՀ դրամ գումար՝ ծրագրով և (կամ) սույն պայմանագրով սահմանված չափաքանակներով՝ հիմք ընդունելով հրամանով հաստատված նախահաշիվը և կանոնակարգը, իսկ Հիմնադրամը պարտավորվում է ծրագիրն իրականացնել որոշմամբ և սույն պայմանագրով սահմանված կարգով:

1.2. Ծրագրով նախատեսված՝ Հիմնադրամի կողմից իրականացվելիք միջոցառումը (այսուհետ՝ միջոցառում) ներկայացված է սույն պայմանագրի N1 հավելվածում:

2. Կողմերի իրավունքները և պարտավորությունները

2.1. Պետական մարմինն իրավունք ունի՝

2.1.1. ցանկացած ժամանակ (այդ թվում՝ լիազոր մարմնի միջոցով) ստուգելու Հիմնադրամի կողմից իրականացվող միջոցառման ընթացքը և որակը՝ առանց միջամտելու վերջինիս գործունեությանը.

2.1.2. որոշմամբ և հրամանով սահմանված պահանջներին չհամապատասխանելու դեպքում չընդունելու իրականացված միջոցառումը՝ իր հայեցողությամբ սահմանելով թերությունների անհատույց վերացման ողջամիտ ժամկետ, և Հիմնադրամից պահանջելու վճարել սույն պայմանագրի 5.1-ին կետով նախատեսված տուգանքը.

2.1.3. առանց իրականացված միջոցառման արդյունքների դիմաց գումար տրամադրելու՝ միակողմանի լուծելու սույն պայմանագիրը և պահանջելու հատուցել պատճառված վնասները, եթե՝

ա. Հիմնադրամը ժամանակին չի սկսում ծրագրի իրականացումը, կամ ծրագրի իրականացման ժամանակ ակնհայտ է դառնում, որ այն պատշաճ չի իրականացվելու,

բ. Հիմնադրամը երկու և ավելի անգամ խախտել է ծրագրով նախատեսված միջոցառման իրականացման ժամկետները (միջոցառման իրականացման ժամկետներ նախատեսված լինելու դեպքում),

գ. իրականացված միջոցառումումը չի համապատասխանում ծրագրով սահմանված պահանջներին.

2.1.4. սույն պայմանագիրն օրենքով կամ սույն պայմանագրով նախատեսված հիմքերով լուծելու դեպքում պահանջելու իրեն հանձնել անավարտ միջոցառման արդյունքները:

2.2. Հիմնադրամը իրավունք ունի՝

2.2.1. իրականացված միջոցառման արդյունքը պետական մարմնի կողմից ընդունվելու դեպքում պահանջելու վճարել իրեն հասանելիք գումարը.

2.2.2. պետական մարմնի կողմից գումարները չվճարվելու դեպքում միակողմանի լուծելու սույն պայմանագիրը և պահանջելու հատուցել իրեն պատճառված վնասները:

2.2.3. անհրաժեշտության դեպքում պայմանագրի անբաժանելի մաս կազմող նախահաշվով նախատեսված ծախսային ուղղություններում իրականացնել յուրաքանչյուր ծախսային ուղղության գումարի 10 տոկոսի չափով շեղում՝ չխախտելով վճարումների համար սահմանված նորմերը:

2.3. Պետական մարմինը պարտավոր է՝

2.3.1. ծրագրով նախատեսված դեպքերում աջակցել Հիմնադրամին.

2.3.2. կատարել ծրագրի (միջոցառման) իրականացման մոնիթորինգ՝ անհրաժեշտության դեպքում համագործակցելով այլ պետական կառավարման մարմինների հետ.

2.3.3. իրականացնել ծրագրով նախատեսված այլ աշխատանքներ.

2.3.4. իրականացված միջոցառման մասին ներկայացված կատարողական հաշվետվությունների վերաբերյալ համապատասխան որոշում ընդունել դրանք ստանալու օրվանից մինչև 20 աշխատանքային օրվա ընթացքում (եթե ներկայացված հաշվետվությունների համաձայն իրականացված միջոցառումը համապատասխանում է ծրագրի և սույն պայմանագրի պահանջներին, ապա դրանք ընդունվում են):

2.4. Հիմնադրամը պարտավոր է՝

2.4.1. իրականացնել ծրագրի շրջանակներում պետական մարմնի կողմից տրամադրված գումարների հաշվապահական հաշվառման վարում՝ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով.

2.4.2. պայմանագրով նախատեսված ֆինանսական միջոցներն օգտագործել ծրագրով և (կամ) սույն պայմանագրով սահմանված նպատակներով ու չափաքանակներով՝ համաձայն հրամանի նախահաշվի.

2.4.3. կատարել պետական մարմնի կողմից բացահայտված թերությունների վերացման նպատակով տրված ցուցումները.

2.4.4. սույն պայմանագրով սահմանված միջոցառման ավարտից հետո տասնհինգ աշխատանքային օրվա ընթացքում պետական մարմին ներկայացնել միջոցառումների իրականացման մասին բովանդակային և ֆինանսական ամփոփ հաշվետվություններ.

2.4.5. սույն պայմանագրի գործողության ընթացքում ապահովել ծրագրի իրականացմանը վերաբերող փաստաթղթերին ծանոթանալու պետական մարմնի հնարավորությունը՝ վերջինիս կողմից գրավոր պահանջ ստանալու օրվանից 5 աշխատանքային օրվա ընթացքում.

2.4.6. պետական մարմնի կողմից միջոցառման իրականացման մասին հաշվետվությունները չընդունվելու դեպքում պետական մարմնի կողմից սահմանված ողջամիտ ժամկետում անվճար վերացնել արձանագրված անհամապատասխանությունները.

2.4.7. ծրագրի իրականացման համար անհրաժեշտ ապրանքները, աշխատանքները և ծառայությունները ձեռք բերել «Գնումների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված կարգով՝ պետության կարիքների համար կատարվող գնումների կանոններին համապատասխան:

2.4.8. ավարտված միջոցառման փաստացի կատարված ծախսերի հաշվետվությունը (հրամանով հաստատված կանոնակարգի և նախահաշվի համաձայն և ժամկետներում) ներկայացնել պետական մարմին, նկատի ունենալով, որ փաստացի ծախսերը հիմնավորող հաշվապահական և այլ

փաստաթղթերը գտնվում են Հիմնադրամում և վերջինս պատասխանատվություն է կրում դրանց իսկության համար:

2.4.9 չծախսված գումարի վերջնական, տարեվերջյան մնացորդը վերադարձնել Հայաստանի Հանրապետության պետական բյուջե ոչ ուշ, քան մինչև 2021 թվականի դեկտեմբերի 25 -ը:

3. Մոնիթորինգը

3.1. Պետական մարմինը ծրագրի իրականացման նախնական, ընթացիկ և վերջնական արդյունքների համապատասխանության գնահատման նպատակով իրականացնում է մոնիթորինգ:

3.2. Մոնիթորինգն իրականացվում է պետական մարմնի և (կամ) նրա կողմից լիազորված անձի կողմից:

3.3. Մոնիթորինգի իրականացման ընթացքում բացահայտված թերացումների ու բացթողումների շտկման նպատակով Հիմնադրամին տրվում են ցուցումներ, և կատարվում են առաջարկություններ:

3.4. Պետական մարմինը ցանկացած ժամանակ կարող է ծրագրի շրջանակներում իրականացնել մոնիթորինգ՝ ուսումնասիրելով ծրագրին առնչվող ցանկացած փաստաթղթեր և նյութեր:

3.5. Մոնիթորինգի իրականացման ընթացքում Հիմնադրամից կարող են պահանջվել գրավոր ու բանավոր պարզաբանումներ և բացատրություններ:

4. Վճարման կարգը և ժամկետները

4.1 Սույն պայմանագրի 1.1-ին կետով նախատեսված գումարը պետական մարմինը փոխանցում է Հիմնադրամին՝ համաձայն սույն պայմանագրի անբաժանելի մասը կազմող N2 հավելվածի՝ վճարման ժամանակացույցի:

4.2 Պետական մարմինը վճարումն իրականացնում է անկանխիկ՝ դրամական միջոցները Հիմնադրամի հաշվարկային հաշվին փոխանցելու միջոցով:

5. Կողմերի պատասխանատվությունը

5.1. Սույն պայմանագրով նախատեսված հաշվետվությունների ներկայացման համար սահմանված ժամկետները չպահպանելու դեպքում Հիմնադրամը Պետական մարմնին վճարում է տույժ՝ չներկայացված հաշվետվության համար պետական մարմնի կողմից հաստատված նախահաշվի 0.05 (զրո ամբողջ հինգ հարյուրերորդական) տոկոսի չափով՝ ուշացված յուրաքանչյուր օրացույցային օրվա համար, իսկ պայմանագրով և ծրագրով նախատեսված պարտավորությունների չկատարման կամ ոչ պատշաճ կատարման դեպքում Հիմնադրամը, եթե Պետական մարմնին չի ներկայացրել դրա վերաբերյալ հիմնավոր բացատրություն, վճարում է տուգանք չկատարած աշխատանքի 0,5 (զրո ամբողջ հինգ տասնորդական) տոկոսի չափով:

5.2. Տույժի և տուգանքի վճարումը Հիմնադրամին չի ազատում իր պարտավորությունները կատարելու և խախտումները վերացնելու պարտականությունից: Պետական մարմինը սույն կետով նախատեսված գումարները հաշվարկում և հաշվանցում է Հիմնադրամի վճարվելիք գումարներից կամ պահանջում է հետ վճարել :

6. Պայմանագրի գործողության ժամկետը

6.1. Պայմանագիրն ուժի մեջ է մտնում կողմերի ստորագրման պահից և գործում է մինչև պարտավորությունների ամբողջ ծավալով կատարումը:

7. Անհաղթահարելի ուժի ազդեցությունը (ՖՈՐՍ-ՄԱԺՈՐ)

7.1. Պայմանագրով նախատեսված պարտավորություններն ամբողջությամբ կամ մասնակիորեն չկատարելու համար կողմերն ազատվում են պատասխանատվությունից, եթե դա եղել է անհաղթահարելի ուժի ազդեցության հետևանքով, որը ծագել է պայմանագիրը կնքելուց հետո, և որը կողմերը չէին կարող կանխատեսել կամ կանխարգելել: Այդպիսի իրավիճակներն են երկրաշարժը, ջրհեղեղը, հրդեհը, պատերազմը, ռազմական և արտակարգ դրության հայտարարումը, քաղաքական հուզումները, գործադուլները, հաղորդակցության միջոցների աշխատանքի դադարեցումը, պետական մարմինների ակտերը և այլն, որոնք անհնարին են դարձնում պայմանագրով նախատեսված պարտավորությունների կատարումը: Եթե անհաղթահարելի ուժի ազդեցությունը շարունակվում է 3 ամսվանից ավելի, ապա կողմերից յուրաքանչյուրն իրավունք ունի լուծելու պայմանագիրը՝ դրա մասին նախապես տեղյակ պահելով մյուս կողմին:

8. Եզրափակիչ դրույթներ

8.1. Հայաստանի Հանրապետության կառավարության կողմից հաստատված ծրագիրը հանդիսանում է սույն պայմանագրի անբաժանելի մասը:

8.2. Պայմանագրում կատարվող փոփոխությունները կամ լրացումներն իրավաբանական ուժ ունեն, եթե կազմված են գրավոր և ստորագրված են կողմերի կողմից:

8.3. Պայմանագիրը կնքվում է պայմանագրի կողմերի թվին համապատասխան թվով օրինակով, որոնք ունեն հավասարազոր իրավաբանական ուժ: Յուրաքանչյուր կողմին տրվում է պայմանագրի մեկ օրինակ:

8.4. Պայմանագրով նախատեսված պարտավորությունների չկատարման հետ կապված, ինչպես նաև սույն պայմանագրով չնախատեսված հարաբերությունները կարգավորվում են Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ:

9. Կողմերի հասցեները, բանկային վավերապայմանները և ստորագրությունները

ՊԵՏԱԿԱՆ ՄԱՐՄԻՆ

ՀՀ կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարություն
Հասցե՝ ք. Երևան, Կառավարական 2-րդ շենք
ՀՀ ՖՆ գործառնական վարչություն
Հ/Հ 900011038511
ՀՎՀՀ՝ 02698732

Գլխավոր քարտուղարի
պարտականությունները կատարող՝

_____ Վ. Գասպարյան

Կ.Տ.

ՀԻՄՆԱԴՐԱՄ

Հատիս» սպորտային բարեգործական նադրամը
Հասցե՝ ք. Աբովյան, Բարեկամության 1
ՀՎՀՀ՝ 03528429
«Այ Դի» բանկ ՓԲԸ Աբովյանի մասնաճյուղ
h/h 11803102081100

Տնօրեն

_____ Ա. Պոռազյան

Կ.Տ.

2021 թ. օգոստոս -ի
կնքված N -2021 պայմանագրի

ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐ

	Իրականացվելիք միջոցառման անվանումը	Համառոտ բովանդակությունը	Կատարման ենթակա գործառույթների նկարագիրը	Ակնկալվող արդյունքները և դրանց գնահատման չափանիշները	Վերջնաժամկետը	Պահանջվող գումարը(դրամ)
1.	«Հայաստանի Հանրապետության վարչապետի գավաթ» սիրողական կրոսավավազքի մրցաշար	Մրցաշարն անցկացվելու է Փարաքար-Էջմիածին ճանապարհահատվածում «Հայաստանի Հանրապետության վարչապետի գավաթ» սիրողական կրոսավազքի մրցաշար ծրագրի կատարող՝ «Հատիս» սպորտային բարեգործական հիմնադրամ:)	«Հայաստանի Հանրապետության վարչապետի գավաթ» սիրողական կրոսավազքի մրցաշարին ակնկալվում է երեք տարիքային խմբերում շուրջ 2500, 16 և բարձր տարիքի մարդկանց մասնակցություն (տղամարդ, կին):	**Արդյունքները** Մրցաշարն անցկացվելու է՝ 3 տարիքային խմբով՝ 1) 1-ին տարիքային խումբ՝ 15-ից 17 տարեկան դպրոցականների համար 3 կմ (աղջիկներ և տղաներ), 2) 2-րդ տարիքային խումբ՝ 18-ից 35 տարեկան կանայք, 18-ից 40 տարեկան (1981-2003 թթ. ծնված) տղամարդիկ, 10 կմ, 3) 3-րդ տարիքային խումբ՝ 36 և բարձր տարիքի կանայք, 41 և բարձր տարիքի տղամարդիկ, 10 կմ: Մրցաշարի 1-ին տարիքային խմբի՝ 3 կմ. վազքում 1-ին, 2-րդ և 3-րդ տեղերը գրաված դպրոցահասակ տղաները և աղջիկները պարգևատրվում են համակարգիչներով **(6 համակարգիչ)**: 2-րդ և 3-րդ տարիքային խմբերում՝ (տղամարդիկ և կանայք) 10 կմ վազքում 1-ից 20-րդ տեղեր գրաված մասնակիցները պարգևատրվում են դրամական մրցանակներով՝ 1-ին տեղ՝ 1.000.000 << դրամ, 2-րդ տեղ՝ 600.000 << դրամ, 3-րդ տեղ՝ 400.000 << դրամ, 4-րդ տեղ՝ 150.000 << դրամ, 5-րդ տեղ՝ 100.000 << դրամ, 6-10-րդ տեղերը՝ 75.000 << դրամ, 11-20-րդ տեղերը՝ 50.000 << դրամ **(80 մրցանակակիր)**: **Գնահատման չափանիշները** Ըստ փաստացի ներկայացված հաշվետվության ցուցանիշների վերլուծություն:	30.12.201թ.	35,710.200
	Ընդամենը					35,710.200

ՊԵՏԱԿԱՆ ՄԱՐՄԻՆ
ՀՀ կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարություն
Հասցե՝ ք. Երևան, Կառավարական 2-րդ շենք
ՀՀ ՖՆ գործառնական վարչություն
հ/հ 900011038511 ՀՎՀՀ՝ 02698732
Գլխավոր քարտուղարի
պարտականությունները կատարող՝
_____ Վ. Գասպարյան
Կ.Տ

ՀԻՄՆԱԴՐԱՄ
«Հատիս» սպորտային բարեգործական հիմնադրամը
Հասցե՝ ք. Աբովյան, Բարեկամության 1
ՀՎՀՀ՝ 03528429
«ԱՄՀԻ» բանկ ՓԲԸ Աբովյանի մասնա
հ/հ 11803102081100
Տնօրեն՝
_____ Ս. Պոռազյան
Կ.Տ

Հավելված N2
2021 թ. ապրիլի -ին
կնքված N ՍՊՖ4 -2021 պայմանագրի

«Հատիս» սպորտային բարեգործական հիմնադրամի 2021թ. ՀՀ պետական բյուջեից ֆինանսավորման չափի վճարման ժամանակացույց(աճողական)

Ձեռք բերվող ապրանքի, աշխատանքի, ծառայության անվանումը	Ընդամենը տարեկան (հազար դրամ)	Նախատեսվում է ֆինանսավորել ՀՀ 2021 թվականի պետական բյուջեից (հազար դրամ), ընդ որում՝											
		1 եռամսյակ			6 ամիս			9 ամիս			տարի		
		հունվար	փետրվար	մարտ	ապրիլ	մայիս	հունիս	հուլիս	օգոստոս	սեպտեմբեր	հոկտեմբեր	նոյեմբեր	դեկտեմբեր
1	2	3	4	5	6	7	8	9	10	11	12	13	14
Ծրագիր	35,710.200	0	0	0	0	0	0	0			35,710.200	35,710.200	35,710.200
Ընդամենը	35,710.200	0	0	0	0	0	0	0			35,710.200	35,710.200	35,710.200

ՊԵՏԱԿԱՆ ՄԱՐՄԻՆ

ՀՀ կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարություն
Հասցե՝ ք. Երևան, Կառավարական 2-րդ շենք
ՀՀ ՖՆ գործառնական վարչություն
ՀՀ 900011038511
ՀՎՀՀ՝ 02698732
Գլխավոր քարտուղարի
պարտականությունները կատարող՝
Վ. Գասպարյան
Կ.Տ

ԻՐԱՎԱԿԱՆ ԱՆՁ

Հատիս» սպորտային բարեգործական հիմնադրամը
Հասցե՝ ք. Աբովյան, Բարեկամության 1
ՀՎՀՀ՝ 03528429
«Այ Դի» բանկ ՓԲԸ Աբովյանի մասնա
հ/հ 11803102081100
Տնօրեն՝
Ս. Պոգոյան
Կ.Տ